Զինծառայողների
Ապահովագրության
Հիմնադրամ

Միասին՝ զինվորիս կողքին...

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԶԱՀ)

2022Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԸ ՆԵՐԱՌՅԱԼ

ՆԿԻՐԱԲԵՐԵԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Հիմնադրամի կառավարում և ֆինանսական վերլուծություն

ԶԱՀ-ի ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները

ԶԱՀ-ի գործառնությունները 2017-2022թթ. ֆինանսական տարիների համար

ԶԱՀ-ի շահառուները և 2022թ. վճարված հատուցումները

ԶԱՀ-ի նվիրաբերությունները 2017-2022թթ. ֆինանսական տարիներին

ԶԱՀ-ի շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն

ԶԱՀ-ի զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2022թ. աուդիտորական հաշվետվություն*

*Աուդիտորական հաշվետվությունը կհրապարակվի 2023թ. 2-րդ եռամսյակի սկզբում: 2022թ. տարեկան հաշվետվության ֆինանսական մասը կճշգրտվի ըստ 2022թ. Աուդիտորական հաշվետվության արդյունքների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարինե Սարգսյան
Գործադիր գլխավոր տնօրեն
Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ

Հարգելի՛ բարեկամ,

Ես անչափ հպարտ եմ և ոգեշնչված այն հանգամանքով, որ 2022 թ. ապրիլին ինձ ընդունեցին առաջնորդելու Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի նվիրված թիմին: Մենք բոլորս երախտագիտության պարտք ունենք պատերազմի զոհերի և նրանց ընտանիքների նկատմամբ, ովքեր իրենց կյանքը զոհաբերեցին մեր երկրի համար, և մենք ամեն ինչ կանենք մեր զինծառայողներին և նրանց ընտանիքներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու ու նրանց սոցիալական ինտեգրման, բարգավաճման և զարգացման նպատակով համապատասխան ռեսուրսներ հայթայթելու համար: Ես հավատացած եմ, որ մեր հերոսների պատմություններն ու փորձառությունները մեր հասարակության մեջ սերմանելու են ամուր արժեքներ, համոզմունք և վերաբերմունք, և ԶԱՀ-ը կարող է համախմբման ուժեղ հարթակ լինել աշխարհասփյուռ հայության համար... հանուն գնահատանքի, աջակցության և հարգանքի...

2020թ. և հաջորդող տարիները լի էին դժվարություններով, և մենք փորձության ենթարկվեցինք և՛ որպես անհատ, և՛ որպես միասնական ազգ: Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը պատվով հաղթահարեց պատերազմի նետած մարտահրավերները: Մինչդեռ, ինչպես զինծառայողներն են Հայաստանում ծառայում բարդ միջավայրում, այնպես էլ ԶԱՀ-ն է ուժ և դիմակայունություն ցուցաբերել 2020թ. փոթորիկը հաղթահարելու համար: ԶԱՀ-ը եղել է և կլինի 2008-2022թթ. զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների և նրանց ընտանիքների աջակցության առանցքը:

2022թ. վերջի դրությամբ մենք աջակցել ենք 5,090 զինվորների և նրանց ընտանիքների: ԶԱՀ-ը պարտադիր վճարումներից հավաքագրել է 95.3 մլրդ ՀՀ դրամ, նվիրաբերությունների միջոցով՝ 9.1 մլրդ ՀՀ դրամ և ակտիվների կառավարման միջոցով՝ 10.1 մլրդ ՀՀ դրամ և իրականացրել է շուրջ 71 մլրդ ՀՀ դրամի հատուցում:

ԶԱՀ-ի առաքելությունը հաջողությամբ իրականացվեց մեր աջակիցների՝ անհատ և կորպորատիվ դոնորների առատաձեռնության շնորհիվ: Ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացուն, ով անտրտունջ կատարել է իր պարտադիր դրոշմանիշային վճարները ԶԱՀ-ին, ինչպես նաև կամավոր ներդրումներ կատարող մեր դոնորներին Հայաստանից և ամբողջ աշխարհից, և վերջապես ԶԱՀ-ի թիմին՝ նվիրված և անխոնջ աշխատանքի համար:

Ինչպես միշտ, թափանցիկ, հաշվետու և ազնիվ գործելու մեր հանձնառությունը շարունակվում է, և մենք երախտապարտ ենք մեր աջակիցներին, ովքեր վստահում են մեզ մեր կարևոր առաքելությունն իրականացնելու գործում՝ որպես մեր շահառուների օժանդակման հենարան:

Հիմնադրամը միշտ պատրաստ է բավարարել ծագող հրատապ խնդիրները՝ միաժամանակ շարունակական օգնություն ցուցաբերելով երկարաժամկետ մարտահրավերների առջև կանգնածներին:

2022թ. հոկտեմբերից ի վեր ԶԱՀ-ի մշակած նոր ռազմավարության համաձայն, ԶԱՀ-ի հոգաբարձուների խորհուրդը և մեր թիմը աշխատում են կազմակերպության հետագա ինստիտուցիոնալացման և զարգացման, ՀՀ կառավարության և այլ շահակից կողմերի հետ արդյունավետ համագործակցության ուղղությամբ: Երկարաժամկետ հեռանկարում մենք պլանավորում ենք մեր ջանքերն ուղղել՝ ԶԱՀ-ը ազգային հարթակի վերածելու, ինչպես նաև իրագործելիության դեպքում զինծառայողների պարտադիր ապահովագրության բաղադրիչի ներդրման ուղղությամբ: Մենք կուսումնասիրենք և կիրականացնենք զարգացման ծրագրեր՝ հարմարեցնելով դրանք ԶԱՀ-ի շահառուների մեծ համայնքին լավագույնս աջակցելու համար:

Անկեղծ և սրտանց շնորհակալություն ենք հայտնում բոլորին, ովքեր օգնեցին մեզ դիմակայելու փորձություններին այս պատմական և աննախադեպ տարում: Թեև մենք հույս ունենք զարգացման և ծաղկման խաղաղ ապագայի... բայց մենք պետք է հաշվի առնենք ներկայիս աշխարհաքաղաքական լարված իրողությունները և պատրաստ լինենք տարածաշրջանում հնարավոր էսկալացիաների: Նայելով ապագային՝ մեր հոգաբարձուների խորհուրդը և գործադիր թիմը կշարունակեն ջանքերը՝ զարգացնելու հիմնադրամը և դարձնելու մի ինստիտուցիոնալ կառույց՝ արժանի մեր զինծառայողների նվիրվածությանն ու զոհաբերությանը:

Միասին՝ զինվորիս կողքին...

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն
Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ

ԹԻՄ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Հոգաբարձուների խորհուրդ

Իրինա Սեյլանյան
Խորհրդի նախագահ



Ադամ Կաբլանյան
Խորհրդի անդամ

Ժոզեֆ Սիմոնյան
Խորհրդի անդամ

Անահիտ Ադամյան
Խորհրդի անդամ

Դավիթ Հակոբյան
Խորհրդի անդամ

Թիմ

Կարեն Սահակյան
Ներքին աուդիտ



Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Տաթևիկ Յաղջյան
ԳԳՏ տեղակալ
Գործառնությունների գծով տնօրեն

Լուսինե Զուրաբյան
Ֆինանսական տնօրեն

Սմբատ Սահյան
Հատուցումների գծով տնօրեն

Նարինե Գալստյան
Հանրային կապերի և հաղորդակցության տնօրեն

Սոնա Բաղդասարյան
Դոնորների հետ կապերի և ֆոնդահայթայթման մենեջեր



Մնացական Ավետիսյան
Հատուցումների համակարգող

Արփինե Զարգարյան
Սոցիալական ծրագրերի համակարգող

Ֆելիքս Չիլինգարյան
Պորտֆելի կառավարիչ



Լիլիթ Ղաբուզյան
Հաշվետար



Վազգեն Մարտիրոսյան
SS ծրագրի մենեջեր



Մարի Բոյաջյան
Ադմինիստրատիվ օգնական

Նարե Ատոմյան
Ադմինիստրատիվ օգնական

ԶԱՀ-Ի ԱՄՓՈՓ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը (ԶԱՀ) ստեղծվել 2017թ.-ին՝ հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին և 1-ին ու 2-րդ խմբի զինհաշմանդամություն ձեռք բերած զինվորներին կայուն, արդար ֆինանսական հատուցումներ տրամադրելու նպատակով՝ հանուն ապագա սերունդների խաղաղության ու անվտանգության: Հիմնադրամը ապաքաղաքական կառույց է և գործում է համաձայն **ՀՀ Օրենքի**:

ԶԱՀ-ը եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի և Արցախի յուրաքանչյուր աշխատող քաղաքացի պարտադիր վճար է կատարում իր աշխատավարձից: Հիմնադրամը համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինվորների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

ԶԱՀ-ի միջոցները գոյանում են՝

- Հայաստանի և Արցախի հարկատուների կողմից վճարվող պարտադիր վճարներից (1,500-15,000 ՀՀ դրամ՝ կախված ամսական եկամուտից)
- Նվիրաբերություններից, որոնք ստացվում են ողջ աշխարհից
- ԶԱՀ-ի ակտիվների կառավարումից:

ԶԱՀ-ը կառավարվում է անկախ **Հոգաբարձուների խորհրդի** կողմից՝ բարձր հեղինակություն վայելող մարդիկ, ովքեր մեծ փորձառություն ունեն ֆինանսների և բանկային գործի, բիզնեսի, ճգնաժամային կառավարման, դրամահավաքի և ակտիվների կառավարման ոլորտներում:

ԶԱՀ-ի կառավարման մաս է կազմում նաև բարձր մոտիվացիայով և փորձառու երիտասարդ գործառնական թիմը:

ԶԱՀ-ի կայքը հնարավորություն է տալիս տեսնել բոլոր ֆինանսական հոսքերը նվիրաբերությունների և պարտադիր վճարների տեսքով, ինչպես նաև հրապարակում է շահառուների ցանկը և կատարված հատուցումները: ԶԱՀ-ի կայքում հրապարակվում են գլխավոր գործադիր տնօրենի եռամսյակային, տարեկան հաշվետվությունները և աշխարհի լավագույն 10 աուդիտորական ընկերություններից մեկի կողմից իրականացված **Տարեկան աուդիտի հաշվետվությունները**:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Համախմբել ազգին՝ կանգնելու զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին՝ ապահովելու նրանց ֆինանսական կայունությունը և արժանապատիվ կյանքը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լինել սոցիալապես պատասխանատու հիմնադրամ զինծառայողների համար, որն իր մեջ ներառում է պարտադիր և կամավոր ապահովագրական հատուցումները:

ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր պարտքն է կանգնել զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամ դարձած մեր զինվորների և նրանց ընտանիքների կողքին:

ԶԱՀ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2022ԹԹ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

2020թ. պատերազմից հետո 2021թ. ԶԱՀ-ի համար եղավ ճգնաժամի կառավարման տարի, ինչպես գործառնական, այնպես էլ կառուցվածքային առումով: Իսկ 2022թ. վերականգնման տարի էր՝ ակտիվների պահուստավորման և ամսական կանոնավոր հատուցումների վճարման առումով: 2022թ. սեպտեմբերի 12-13-ը Ադրբեջանի կողմից պատերազմական գործողությունների էսկալացիան ավելացրեց ԶԱՀ-ի պարտավորությունները ևս 211 շահառուների համար միանվագ և կանոնավոր ամսական վճարումներով, որոնք կազմում են լրացուցիչ 2.1 մլրդ ՀՀ դրամ, ինչը կարճաժամկետ կտրվածքում մեծ ազդեցություն չունեցավ ԶԱՀ-ի ֆինանսական արդյունքների վրա:

2022թ. տարեվերջի դրությամբ ԶԱՀ-ը գրանցել է մոտավորապես 15% եկամտի աճ, որը պայմանավորված է պարտադիր վճարների 21% աճով, և ակտիվների կառավարման եկամուտների 77% աճով՝ չնայած նվիրաբերությունների զգալի անկմանը -61%-ի չափով: 2022թ. Հիմնադրամի եկամտի պարտադիր վճարներից ձևավորվող մասը աճել է 90%-ի՝ համեմատած 2021թ. 85%-ի հետ: Ի հակադրություն՝ նվիրաբերություններին վերագրվող եկամտի մասը 2021թ. 4%-ից իջել է 2022թ.-ին մինչև 1%: Ակտիվների կառավարմանը վերագրվող եկամտի մասը աճել է 3 տոկոսային կետով՝ 2021թ.-ի 5%-ից բարձրացել է մինչև 8% 2022թ., և ակտիվների կառավարումից ստացված եկամուտը աճել է 77%-ով՝ հասնելով մինչև 3.3 մլրդ ՀՀ դրամ:

Հատուցումների անկումը -62%-ով բացատրվում է 2021թ. հետպատերազմական ժամանակահատվածում միանվագ վճարումների մեծ քանակությամբ, որը չի վերաբերում 2022թ., չնայած սեպտեմբերի 13-14-ի կատարված էսկալացիային, քանի որ շահառուները ստանում են միայն իրենց ամսական պարբերական հատուցումները:

2017-2022թթ. արձանագրվել է շուրջ 117.5 մլրդ ՀՀ դրամի եկամուտ հիմնականում պարտադիր վճարներից, նվիրաբերություններից և ակտիվների կառավարումից, և կատարվել է 71 մլրդ ՀՀ դրամի հատուցում:

ՄԼՐԴ ԴՐԱՄ	2017	2018	2019	2020	2021	2022	2017-2022	2022-ի հակ. ՆՏ	% հարաբ 2021	% հարաբ 2022
Եկամուտ պարտադիր վճարներից	5.9	7.4	8.5	9.1	29.1	35.3	95.26	21%	85%	90%
Նվիրաբերություններ	0.1	0.1	0.1	7.0	1.3	0.5	9.1	-61%	4%	1%
Կամուրջ*	-	-	-	1.0	1.5	0.2	2.7	-84%	4%	1%
ՀՀԿԲ**	-	-	-	-	0.3	-	0.3	-100%	1%	0%
Ակտիվների կառավարում	0.2	0.8	1.6	2.4	1.8	3.3	10.1	77%	5%	8%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	-	-	-	-	-	0.0		0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**6.2**	**8.3**	**10.2**	**19.5**	**34.0**	**39.3**	**117.5**	**15%**	**100%**	**100%**
Հատուցումներ	0.4	0.4	0.8	8.0	44.5	16.8	71.0	-62%	99.4%	98%
Վարչական ծախսեր	-	-	-	-	-	0.2	0.2		0.00%	1.44%
Կապիտալ ծախսեր	-				0.1	0.0	0.1	-97%	0.24%	0.02%
Գործառնական ծախսեր	-	-	-	-	0.1	0.0	0.2	79%	0.33%	0.12%
Այլ	-	0.0	0.0	-	-	-	0.0			
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**0.4**	**0.4**	**0.8**	**8.0**	**44.7**	**17.1**	**71.5**	**-62%**	**100%**	**100%**

* **Կամուրջ –** ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԱՀ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհայտ բացակայող զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 25 ամսվա ընթացքում՝ 300,000 ՀՀ դրամի չափով:

** **ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրումը -** 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

ԶԱՀ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017 – 2022թթ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

2022թ. ԶԱՀ-ի ընդհանուր եկամուտը աճել է 15%-ով՝ 2021-ի համեմատ, իսկ ընդհանուր ծախսերը նվազել են -62%-ով:

ԶԱՀ 2017-2022թթ. եկամուտը՝ ծախսերի համեմատ, ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ



2022թ. գրանցվել է եկամտի աճ մոտ 15%-ով՝ պայմանավորված պարտադիր վճարների 21% աճով, ինչը բացատրվում է.

Զբաղված բնակչության ընդհանուր թվի 5% աճով՝ 702 հազար*
Ընկերությունների թվի 7% աճով՝ 63.2 հազ
Միջին աշխատավարձի չափի 19% բարձրացումով մինչև 236.9 հազար ՀՀ դրամ

Ի հակադրություն, նվիրաբերությունների մասնաբաժինը նվազել է -61%-ով, ինչը օրինաչափ դանդաղում է, եթե հաշվի առնենք, որ ներդրումներ չեն կատարվել դոնորների բազան համալրելու համար, ինչպես նաև նկատվել է նվիրատվությունների հետպատերազմյան անկման օրինաչափ միտում:

2022թ. 4-րդ եռամսյակում պարտադիր վճարներին վերագրվող եկամուտներն աճել են 15%-ով, իսկ ակտիվների կառավարումից՝ 102%-ով: Մինչդեռ 2022թ-ի 4-րդ եռամսյակում հատուցումներն աճել են 28%-ով, հիմնականում սեպտեմբերյան իրադարձությունների արդյունքում, որոնք էական ազդեցություն չեն ունեցել ֆինանսական արդյունքների վրա: Վերջինիս արդյունքում ծախսերն աճել են 26%-ով՝ 2022թ-ի տարեկան ծախսերի ընդհանուր -62% անկման դիմաց, ի հակադրություն նախորդ տարվա:

ՄԼՐԴ ԴՐԱՄ	ԵՌ1 2021	ԵՌ2 2021	ԵՌ3 2021	ԵՌ4 2021	ԵՌ1 2022	ԵՌ2 2022	ԵՌ3 2022	ԵՌ4 2022	2021	2022	ԵՌ422 ի հակ. ԵՌ4'21	2022 ի հակ. 2021	% հարաբ 2021	% հարաբ 2022
(ԴՐԱՄ)														
Եկամուտ պարտադիր վճարներից	5.3	7.5	8.0	8.3	8.9	7.3	9.6	9.55	29.1	35.3	15%	21%	85%	90%
Նվիրաբերություններ	0.4	0.4	0.3	0.2	0.2	0.1	0.1	0.10	1.3	0.5	-61%	-61%	4%	1%
Կամուրջ*	-	-	1.5	0.1	-	0.1	0.1	0.04	1.5	0.2	-27%		4%	1%
ՀՀԿԲ**	0.2	-	0.1	-	-	-	-	-	0.3	-	NA	-100%	1%	0%
Ակտիվների կառավարում	0.5	0.4	0.4	0.5	0.4	0.6	1.2	0.98	1.8	3.3	102%	77%	5%	8%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	-	-	0.0	-	-	-	0.00	0.0	0.0	NA		0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**6.4**	**8.3**	**10.2**	**9.1**	**9.5**	**8.1**	**11.1**	**10.66**	**34.0**	**39.3**	**17%**	**15%**	**100%**	**100%**
Հատուցումներ	13.3	19.8	6.9	4.5	3.6	3.9	3.6	5.7	44.5	16.8	28%	-62%	99.4%	98%
Վարչ. ծախսեր	-	-	-	-	0.1	0.1	0.1	0.07	-	0.2	NA		0.00%	1.44%
Կապ. ծախսեր	0.02	0.02	0.01	0.06	0.00	0.00	0.00	0.00	0.11	0.00	-98%	-97%	0.24%	0.02%
Գործառնական ծախսեր	0.01	0.04	0.04	0.06	0.00	0.00	0.00	0.01	0.15	0.02	-86%	79%	0.33%	0.11%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**13.34**	**19.8**	**6.9**	**4.6**	**3.7**	**4.0**	**3.7**	**5.82**	**44.7**	**17.1**	**26%**	**-62%**	**100%**	**100%**

Աղբյուրը՝ Armstat.am համեմատությունը արվել է 2022թ-ն՝ 2021թ-ի սկզբից մինչև հոկտեմբեր ժամանակահատվածի համար:

2022Թ. ԱՄՓՈՓ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ 2017-2021ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

- Պարտադիր վճարումների **37%-ը** ստացվել է 2022թ.
- Նվիրատվությունների **6%-ը** ստացվել է 2022թ.
- Ակտիվների կառավարումից ստացված եկամտի **33%-ը** գոյացել է 2022թ.
- Հատուցումների **24%-ը** վճարվել է 2022թ.

'000 000 AMD	2021	2022	2017-2022	% հարաբ 2022
Պարտադիր վճարներ	29.07	35.27	95.26	37%
Նվիրաբերություններ	1.29	0.55	9.12	6%
Ակտիվների կառավարում	1.84	3.31	10.12	33%
Հատուցումներ	44.48	16.85	70.99	24%

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ 2022Թ.

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

- 2017-2022թթ. ԶԱՀ-ը հատուցում է տվել 5,090 շահառուների:
- 2022թ-ին գրանցվել է **411** նոր դեպք:

Շահառուների թիվը	2022 ԵՌ1	2022 ԵՌ2	2022 ԵՌ3	2022 ԵՌ4	Ընդհ. 2022
1-ին խմբի հաշմանդամ	1	1	2	2	6
2-րդ խմբի հաշմանդամ	5	5	4	2	16
Անհայտ բացակայող	35	45	16	13	109
Զոհված	29	24	9	218	280
Ընդհանուր	70	75	31	235	411

- 2022թ. 4-րդ եռամսյակում գրանցվել է **235 նոր դեպք**՝ ստորև բաշխված ըստ դեպքերի և շահառուների դասակարգման.

ԶՈՀՎԱԾ **218**

ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ **13**

1-ին կարգ **2**

2-րդ կարգ **2**

2022թ. ԶԱՀ-ի հատուցումները՝ ըստ զորքերի կազմի, 411 դեպք



2017-2022 ԹԹ. ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՏՈՒՅՈՒՄՆԵՐԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

2017-2022թթ. 5,090 շահառուները բաշխված են ստորև ներկայացված գրաֆիկական պատկերում ըստ անձնակազմի դասակարգման: Հատկանշական է, որ **45%-ը** ժամկետային շարքայիններ են, իսկ **39%-ը՝** զորակոչված ժամկետայիններ, սպաներ և կամավորականներ:

2017-2022ԹԹ. ԶԱՀ հատուցումները՝ ըստ անձնակազմի դասակարգման



ԶԱՀ շահառուների բաշխումը 2017-2022 ԹԹ.



ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ 2017-2022ԹԹ.

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ



2017-2022թթ. ամփոփ պատկեր

411
նոր հատուցման դեպքեր 2022թ., ներառյալ 235 դեպքեր 4-րդ եռամսյակում և 5,090 դեպքեր 2017-2022թթ.

16.8 միլիարդ ՀՀ դրամի հատուցում 2022թ., ներառյալ 5.7 մլրդ՝ 4-րդ եռամսյակում և 71 մլրդ ՀՀ դրամ 2017-2022թթ. ի վեր զոհվածներին, անհայտ բացակայողներին, կամ զինհաշմանդամության ապահովագրության իրավունք ունեցողներին

21%
դրոշմանիշային վճարի մուտքերի աճ 2022թ. վերջին՝ համեմատած 2021թ. հետ

ԶԱՀ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2022 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

2017-2022թթ. ԶԱՀ-ի նվիրաբերությունները կազմել է շուրջ 9.1 միլիարդ ՀՀ դրամ: Նվիրաբերության ընդհանուր թիվը գրեթե 83 հազար է, նվիրաբերությունների միջին գումարը՝ 108 հազար ՀՀ դրամ: Ամենշատ նվիրաբերությունները կատարվել են 2020թ. պատերազմի ժամանակ և դրանից հետո: Ակտիվացում եղավ նաև 2022թ. սեպտեմբերյան էսկալացիայից հետո:

2021թ. համեմատ, 2022թ. նվիրաբերությունների ծավալը նվազել է -61%-ով: Նվիրաբերությունների թիվը և միջին չափը նույնպես անկում են գրանցել՝ համապատասխանաբար -51%-ով և -19%-ով: Դա բացատրվում է հետպատերազմյան իրավիճակով, քանի որ պատերազմի ժամանակ նվիրաբերությունները սովորաբար կտրուկ աճ են ցույց տալիս, ինչն արտահայտվում է 2020թ. արդյունքներում: Անկման ամենամեծ բաժինը գրանցվել է Ռուսաստանից արվող նվիրաբերություններում, ինչը բացատրվում է Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցներով և դրամական փոխանցումների համակարգերում ստեղծված դժվարություններով: Նվիրաբերությունները կատարվել են բանկային փոխանցումների, ինչպես նաև ԶԱՀ-ի կայքի՝ www.1000plus.am միջոցով:

2017-2022թթ. նվիրաբերությունները ըստ արժույթի								
Արժույթը, ' 000 000	2017	2018	2019	2020	2021	2022	2017-2022	2022 ի հակ. 2021
ՀՀ դրամ	94	89	113	4,380	752	263	5,714	-62%
Դոլար		0.002	0.005	4.83	0.88	0.492	6	-44%
Ռուբլի		0.08	0.08	115	7	0.46	122	-93%
Եվրո		0.0008	0.0004	0.80	0.12	0.0341	1	-72%
2017-2022թթ. նվիրաբերությունները ՀՀ դրամով								
Նվիրաբերություններ քանակ	94	95	115	6,976	1,290	508	9,079	-61%
	445	1,050	1,312	41,769	25,976	12,665	83,217	-51%
Նվիրաբերությունների միջին չափը	0.21	0.09	0.9	0.17	0.05	0.04	0.108	-19%

2017-2022ԹԹ. ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, 000 000 ՀՀ ԴՐԱՄ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ



ՁԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

ՁԱՀ-ը համագործակցում է տարբեր հիմնադրամների, ոչ պետական և բարեգործական կազմակերպությունների հետ՝ աջակցելով մեր զինվորներին և նրանց ընտանիքներին, նրանց ֆիզիկական, հոգեբանական և կրթական բարեկեցության ապահովման նպատակով:

Հաշվի առնելով շահառուների հետ կապի պահպանման կարևորությունը՝ ՁԱՀ-ի թիմը քայլեր է նախաձեռնել իր շահառուների հետագա զարգացման և սոցիալական ինտեգրման ծրագրերի մեկնարկի ուղղությամբ:
Այդ նպատակով փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել **Հերոսների վերականգնողական քաղաք ՀԿ**-ի հետ: ՀԿ-ն հոգեկան առողջության կենտրոն է, որը պատերազմի մասնակիցներին տրամադրում է հոգեբանական, մտավոր և սոցիալական վերականգնողական ծառայություններ:

Փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել նաև **Ֆրանս-հայկական մասնագիտական զարգացման կենտրոն հիմնադրամի** հետ, որը ՁԱՀ-ի շահառուներին կտրամադրի անվճար կարճաժամկետ միջին մասնագիտական դասընթացներ:

2022թ. հունիսի 9-ին փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել **reArmenia** բարեգործական հիմնադրամի հետ. եզակի հարթակ, որտեղ անհատները և պետական ու մասնավոր կազմակերպությունները կարող են միջոցներ հայթայթել զարգացման ծրագրերի համար: Թիմը մասնակցել է նաև reArmenia-ի 2-րդ տարեդարձի հանդիպմանը և ներկայացրել ՁԱՀ-ի գործունեությունը համագործակցության հեռանկարային հնարավորությունների համար:

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

2022 թվականի հունիսի 23-ին **Հավերժ ազգ հիմնադրամ Հայաստան**-ի հետ ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր: Հիմնադրամը նպատակ ունի վերականգնել վնասվածքներ ստացածների կյանքը վերականգնողական առողջապահական ծառայությունների միջոցով: Բացի վերականգնողական բուժումներից Հիմնադրամը պատերազմից տուժած զինծառայողներին տրամադրում է բարձրորակ պրոթեզներ:

2022թ. հուլիսի 18-ին փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել **Վաչե Վարդանյանի** հետ: Արցախյան 44-օրյա պատերազմից հետո Վաչե Վարդանյանը հաստատվել է Արցախում՝ սահմանամերձ Սարուշեն գյուղում, և փորձել օգնել մարդկանց՝ հաղթահարել հետպատերազմյան դժվարությունները՝ շարունակաբար նախաձեռնելով և իրականացնելով ծրագրեր, որոնցից է Կարմիր Շուկա գյուղում բնակվող 7 տարեկան շուրջ 40 երեխաների համար նախատեսված Խոխա զարգացման կենտրոնը: Բացի Կարմիր շուկայից, զարգացման կենտրոն կարողացան հաճախել նաև Թաղավարդի երեխաները: Սա Կարմիր Շուկայի քաղաքապետի հետ համագործակցության հիանալի ծրագիր էր, ով աջակցեց զարգացման ծրագրի շենքի վերանորոգմանը: Բացի «Կարմիր շուկա» ծրագրից Վաչեն կազմակերպել է նաև «Հայորդի» ճամբարը Լոռու մարզում արցախցի 120 երեխաների համար:

2022թ-ի նոյեմբերի 21-ին համագործակցության հուշագիր ստորագրվեց **Գալաքսի (Galaxy Group of Companies) ընկերությունների խմբի** հետ՝ ի նշան փոխադարձ վստահության և համագործակցության պատրաստակամության: Galaxy-ի աշխատակիցներն իրենց Secret Santa նախաձեռնության շրջանակներում պատրաստել են 369 նվեր փաթեթներ, որոնք որպես տոնական անակնկալ պետք է առաքվեին Արցախում գտնվող ԶԱՀ-ի շահառուների երեխաներին:

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

2022թ. նոյեմբերի 22-ին փոխըմբռնման հուշագիր ստորագրվեց **Ուսուցողական առաքելության նախաձեռնություն / Learning Mission Initiative** կազմակերպության հետ՝ ԶԱՀ-ի շահառուներին վերապատրաստման և զարգացման ծառայություններ տրամադրելու համար:

Ուսուցողական առաքելության նախաձեռնությունը շահույթ չհետապնդող կազմակերպությունը է, որը հիմնադրվել է 2020թ. Արցախյան պատերազմից հետո՝ պատերազմի մասնակիցներին SS և անգլերենի ամբողջական կրթություն ապահովելու նպատակով: Կազմակերպությունը իրականացնում է նաև հայագիտության, համաշխարհային պատմության և այլ առարկաների արտադասարանական դասախոսություններ: Այս նախաձեռնությունը ուսանողներին տրամադրում է համակարգիչներ և ամսական ֆինանսական օգնություն, ինչը թույլ է տալիս նրանց հոգալ որոշակի ծախսեր և կենտրոնանալ ուսումնական գործընթացի վրա:

2022թ. նոյեմբերի 24-ին փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել **Վահե Մելիքսեթյան բժշկակրթական հիմնադրամի** հետ: Հիմնադրամի առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում կլինիկական դեղագործության զարգացումն է: Այն կազմակերպում է տեղական և միջազգային միջոցառումներ, որոնց նպատակն է զարգացնել կլինիկական դեղագործությունը, նաև իրականացնում է կլինիկական դեղագործների պատրաստում, ինչպես նաև ֆինանսավորում և վերապատրաստում է ուսանողներին կլինիկական դեղագործության ոլորտում:

Այցելություն Արցախ. հունիսի 16-19, 2022թ.

ՁԱՀ-ի գործառնական թիմը հունիսին այցելեց Արցախ՝ տեղում ՁԱՀ-ի շահառուների հետ հանդիպելու, նրանց կարիքները բացահայտելու համար, ինչպես նաև Արցախի կառավարության հետ համագործակցության հնարավորություններ քննարկելու նպատակով:

Թիմը հանդիպեց Արցախի Հանրապետության նախագահ պարոն Արայիկ Հարությունյանի, Արցախի Հանրապետության պետական նախարար պարոն Արտակ Բեգլարյանի, ինչպես նաև Սոցիալական զարգացման և միգրացիայի նախարար տիկին Արմինե Պետրոսյանի և Առողջապահության նախարար պարոն Միքայել Հայրիյանի հետ: Նախագահը և պետնախարարը բարձր գնահատեցին ՁԱՀ-ի առաքելությունը և այն կարևոր դերը, որ ՁԱՀ-ը ունի հետպատերազմյան իրականության մեջ՝ հիմնականում ապահովելով իր շահառուների ֆինանսական կայունությունը: Քննարկվեց նաև շահառուների համար սոցիալ-տնտեսական ներգրավվածության ծրագրերի համակարգման մեջ ՁԱՀ-ի ընդգրկման հեռանկարը:

Թիմն այցելեց Կարմիր շուկա (Մարտունի), Խնապատ (Ասկերա), Խնածախ (Ասկերա), Սարուշեն (Մարտունի), Ճարտար (Մարտունի) բնակավայրերը և Ստեփանակերտ քաղաքը և հանդիպեց իր շահառուների հետ: Շահառուների առջև ծառացած հիմնական խնդիրներն են՝ զբաղվածությունը, աշխատատեղերի բացակայությունը, մանկական ժամանցի և զարգացման կենտրոնների, ինչպես նաև հոգեբանական աջակցության կենտրոնների բացակայությունը:

ՁԱՀ-ը իր շահառուների և պատերազմից տուժած համայնքների կայուն զարգացման համար գործողություններ կձեռնարկի տարբեր ՀԿ-ների, հիմնադրամների, մասնավոր հատվածի նախաձեռնությունները համակարգելու և նրանց գործունեությունը ճիշտ ուղղությամբ կիզակետելու նպատակով:

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

«Երազների պահապանները» մյուզիքլը՝ ԶԱՀ-ի շահառուների 80 երեխաների մասնակցությամբ

2022թ. հունիսի 1-ին Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ **Թովմասյան հիմնադրամը** կազմակերպել էր բարեգործական միջոցառում, որին մասնակցեցին ԶԱՀ-ի շահառուների 80 երեխաներ: Երեխաները հրավիրվել էին Դվին Մյուզիք Հոլում կայացած «Երազների պահապանները» մյուզիքլի պրեմիերային, որն իր բեմադրությամբ յուրահատուկ հիշարժան իրադարձություն դարձավ փոքրիկ հյուրերի համար: Բարեգործական միջոցառումն ուներ ժամանցային մաս՝ համերգ, որը հատուկ մշակվել էր հոգեբանների կողմից՝ երեխաներին ապաքինելու և ամոքելու համար: Երեխաները վայելեցին ներկայացումը տարբեր խաղերի և ժամանցային ծրագրերի հետ միասին:

Երեխաների պաշտպանության միջազգային օրը Երևան Պարկում

2022թ. հունիսի 2-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը, **ԶԱՀ-ի աջակցությամբ և Վաչե Վարդանյանի հետ համագործակցությամբ** ԶԱՀ-ի շահառուների շուրջ 120 երեխաներ անմոռանալի օր անցկացրին **Երևան Պարկում**: Երեխաները Արցախից էին, ովքեր կորցրել են իրենց ծնողներին, ինչպես նաև իրենց տները: Երեխաներն իսկապես վայելեցին ուրախությամբ լի օրը:

Այրուձի մանկական ակումբ 6-օրյա ամառային ճամբար

2022թ. հուլիսի 11-17-ը **Այրուձի մանկական ակումբը** մեկնարկեց իր հատուկ թերապիայի ծրագիրը՝ պատերազմից տուժած երեխաների համար: Ակումբի աջակցությամբ խոցելի երեխաներին հնարավորություն տրվեց լինել բնության գրկում և կտրվել առօրյայից՝ հետպատերազմյան սթրեսը հաղթահարելու համար:

Ծրագիրը ներառում էր կենդանիների հետ շփում, լողավազանով խաղեր, խեցեգործության դասեր, երեկոյան ժամանց խարույկի շուրջ (կիթառ, երգ) և քայլարշավ: Երեխաները ճամբարում անցկացրին 6 անմոռանալի օր, առանց իրենց թվային սարքավորումների և վայելեցին բնությունն ու ընկերական միջավայրը, ինչպես նաև միմյանց ընկերակցությունը: Ծնողներն իրենց երախտիքի խոսքը հայտնեցին կազմակերպիչներին:

Այրուձի ակումբը գործում է շուրջ 40 տարի՝ ծառայելով պատերազմից և երկրաշարժից տուժած երեխաներին ճամբարում թերապիայի և հատուկ ծրագրերի միջոցով ճգնաժամի սթրեսը հաղթահարելու համար: Կազմակերպչի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել 2023թ. ճամբարային ծրագրերում ԶԱՀ-ի շահառուներին ներգրավելու մասին:

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Հայորդի ամառային ճամբար 18-26 օգոստոսի, 2022թ.

Լոռու մարզի Գուգարք ճամբարում տեղի ունեցավ **Հայորդի ամառային ճամբարը**: Հայորդին կրում է Արցախի հերոս գեներալ Սերգեյ Շաքարյանի անունը: Ճամբարը գործում է ոչ միայն ժամանցի, այլ նաև հայրենասիրական գիտակցության բարձրացման, պատմամշակութային ժառանգության հետ ծանոթանալու, ազգային երգ ու պարի, արվեստի դասերի համար: Ծրագիրը ֆինանսավորվում և իրականացվում է Արցախյան պատերազմում զոհված հայերի ընտանիքների, հայրենակիցների, ԶԱՀ գործընկեր Վաչե Վարդանյանի նախաձեռնությամբ և Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի համատեղ ջանքերով: ԶԱՀ-ի շահառուները կարողացան մասնակցել ճամբարին:

Ճամբարին մասնակցել են 44-օրյա արցախյան և 4-օրյա ապրիլյան պատերազմների զոհված և անհայտ բացակայող զինծառայողների և այլ խոցելի խմբերի 120 երեխաներ: Որպես ջոկատավար ճամբարին մասնակցել են զոհված զինծառայողների կանայք և պատերազմի ընթացքում տարբեր աստիճանի վնասվածքներ ստացած զինծառայողներ: Տարբեր տարիքային խմբերի երեխաները, ովքեր կիսում են նույն կորստի և ցավի զգացումը, ճամբարում համախմբվեցին մեկ գաղափարի շուրջ, որ իրենք մենակ չեն, և միասին կարող են հաղթահարել դժվարությունները:

Ճամբարը հիանալի առիթ էր երեխաներին կարճ ժամանակով ընտանիքների առօրյա սթրեսային ապրելակերպից կտրելու համար՝ ևս մեկ անգամ ցույց տալով, որ համայնքը հոգում է իրենց մասին՝ առօրյան լցնելով ուրախությամբ և հայրենասիրական ոգով:

Նախատեսվում է Հայորդի ճամբարը դարձնել ավանդական և 2023թ. կազմակերպել նմանատիպ ճամբար՝ ավելի շատ մասնակիցներով և ավելի երկար ժամանակով:

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Փոխըմբռնման հուշագիր. Աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության եվ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի եվ մի շարք ՀԿ-ների հետ:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի հետ համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր ստորագրելու մասին, որի նպատակն է ստեղծել թվային հանրային և մասնավոր հատվածի համագործակցության առցանց հարթակ:
2022թ. սեպտեմբերի 29-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ԶԱՀ-ի և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի նախաձեռնությամբ՝ 25 տարբեր ԶԱՀ գործընկեր ՀԿ-ների մասնակցությամբ տեղի ունեցավ ընդլայնված կազմով հանդիպում նշված նպատակի շուրջ և քննարկվեց առցանց միասնական համագործակցության հարթակ ստեղծելու հնարավորությունը: Բոլոր մասնակիցները համակարծիք էին, որ հարթակը հիանալի գործիք կլինի բոլոր այն կազմակերպություններին համախմբելու համար, որոնք ինքնուրույն իրականացնում են սոցիալական, կրթական, առողջացման և այլ ծրագրեր: Հանդիպման ժամանակ վերահաստատվեց, որ նշված հարթակը նպատակային ուղղորդում կտա շահառուներին՝ զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին նրանց կարիքներին համապատասխանող ծառայությունների, կրթական և վերապատրաստման ուսումնական ծրագրերի մասին:

Հանդիպմանը ներկա էին հետևյալ կազմակերպությունների ներկայացուցիչները.

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ
- Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ
- Զինվորի տուն ՀԿ
- Նոր էջ ՀԿ
- Հերոսների վերականգնողական քաղաք ՀԿ
- «Արեն Մեհրաբյան» բարեգործական հիմնադրամ
- Ուսուցման առաքելություն ՀԿ
- 4090 բարեգործական հիմնադրամ
- Կարո Հովագիմյան բարեգործական հիմնադրամ
- Հավերժ ազգ հիմնադրամ Հայաստան
- KASA շվեցարական մարդասիրական հիմնադրամ
- «ՌեԱրմենիա» բարեգործական հիմնադրամ
- Գյումրու տեխնոլոգիական կենտրոն

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

- Gateway Armenia բարեգործական ՀԿ
- Իմ քայլը հիմնադրամ
- «Հայկական Կարիտաս» բարեգործական ՀԿ
- Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ
- «Բարձունք» գիտակրթական-ռազմավարական ՀԿ
- Հայաստանի պետական մանկավարժական համալսարան
- ԵՊՀ Կիրառական հոգեբանության կենտրոնի զինծառայողների և պատերազմից տուժածների հոգեսոցիալական վերականգնողական ծառայություն
- Գլոբալ Շեյփերս Երևան Հաբ
- ‘Աքսես թու Քեյր’ բարեգործական ՀԿ
- Հայ վիրավոր հերոսների հիմնադրամ
- Սոֆթ Կոնտրակտ ընկերություն
- Պրոգրես կրթական ծրագիր
- Երեմյան նախագծային ընկերության, Երեմյան ակադեմիա

Համատեղ հանդիպման արդյունքում միասնական հարթակ ստեղծելու գաղափարը ողջունեցին բոլոր մասնակիցները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց մեկամսյա ժամկետում մշակել ծրագրի տեխնիկական նկարագիրը, այնուհետև այդ փաստաթուղթը շրջանառել մասնակիցների միջև՝ հետադարձ կարծիքների համար: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև մասնակիցների հետ կազմակերպել կանոնավոր համակարգող հանդիպումներ՝ ծրագրի ղեկավարների, ինչպես նաև միմյանց գործունեությանը ծանոթանալու համար:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի հետ հուշագիր ստորագրվեց 2022թ-ի նոյեմբերի 23-ին:

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

2022թ. ԶԱՀ-ի տարեվերջյան դրամահավաք միջոցառումը Մեգերյան Կարպետ ընկերության հետ. Ջազային Կոմիտաս՝ հանուն բարիքի (Jazzical Komitas for Good)

2022թ. հոկտեմբերի 20-ը կարևոր և հիշարժան օր էր Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի համար: Թիմը իրականացրեց իր 1-ին դրամահավաք միջոցառումը՝ Մեգերյան Կարպետ ընկերության սրահում:

Հիրավի եզակի երեկո էր, որը մեկ հարկի տակ հավաքեց ԶԱՀ-ի շահառուներին, անհատ և կորպորատիվ դոնորներին, գործընկերներին և բարեկամներին՝ հնարավորություն ընձեռելով շփվել, հյուրասիրվել և վայելել հանրահայտ դաշնակահար Ջոել Մարտինի հիանալի Կոմիտասյան ջազային կատարումը և մասնակցել ի բարօրություն ԶԱՀ-ի շահառուների կազմակերպված բարեգործական դրամահավաքին:

Միջոցառման հատուկ հյուրն էր պարոն Ջոել Ա. Մարտինը՝ դաշնակահար, պրոդյուսեր, կոմպոզիտոր և գործիքավորող Նորվոքից, համաձայնեց իր բարեգործական ելույթով օժանդակել միջոցառման առաքելությանը: Նա համոզված է, որ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ այն ոգին է, որը միավորում է մեր հավաքական բանականությունը և թույլ չի տալիս մեզ ինքնաոչնչացվել: Նրա համար երեկոյի ամենամեծ արժեքն այն գիտակցումն էր, որ մենք բարի գործ արեցինք ազգին ծառայող զինվորների և նրանց ընտանիքների համար:

Միջոցառման ընթացքում ԶԱՀ-ը նշանավորեց 2020 և 2021թթ իր լավագույն դոնորներին մի քանի անվանակարգերով և իր անկեղծ երախտագիտությունը հայտնեց բոլորին ԶԱՀ-ի առաքելության հանդեպ իրենց աջակցության և անսասան վստահության համար: Ընկերությունների թվում էին HelpSystems, Haypost, OneArmenia, ID բանկ, FASF Սան Ֆրանցիսկոյի Bay Area Artsakh Task Force-ը, ACBA բանկը և այլոք:

Միջոցառման դինամիկ մասը բարեգործական աճուրդն էր, որտեղ վաճառքի դրվեցին Արև Պետրոսյանի, Ադամ Կաբլանյանի, Արամե արվեստի պատկերասրահի, Նոյ գործարանի և ԶԱՀ-ի շահառու Բենիամին Պողոսյանի կողմից ԶԱՀ-ին նվիրած հինգ նմուշները, և ստացված եկամուտն ուղղվեց Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին: Տոմսերի վաճառքից, անհատ և կորպորատիվ նվիրատվություններից և բարեգործական աճուրդից հավաքվեց մոտավերապես 11 65 մլն ՀՀ դրամ:

ՀԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Միջոցառման ընթացքում ՀԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ տիկին Իրինա Սեյլանյանն ընդգծեց ՀԱՀ-ի առաքելության և գոյության կարևորությունը: Տիկին Սեյլանյանը նշեց նաև, որ 2020թ. Արցախյան պատերազմն ապացուցեց, թե որքան կենսական էր ՀԱՀ-ի դերը այն զինծառայողների և նրանց ընտանիքների համար, ովքեր իրենց կյանքը կամ առողջությունն են տվել մեր հայրենիքի պաշտպանության համար:

ՀԱՀ-ի գործադիր տնօրեն տիկին Կարինե Սարգսյանը մի քանի թվերով կարևորեց կատարված աշխատանքը և շեշտեց, որ 2017թ-ից ի վեր ՀԱՀ-ը տրամադրել է 66.5 մլրդ ՀՀ դրամի հատուցում: Տիկին Սարգսյանը լիահույս է, որ մեր զինվորների պատմություններն ու փորձառությունները ամուր արժեքներ, համոզմունքներ և վերաբերմունք կսերմանեն հասարակության մեջ, և ՀԱՀ-ը համախմբող հարթակ կծառայի աշխարհասփյուռ հայության համար:

Դրամահավաք միջոցառումը հրաշալի իրադարձություն էր, որն ապացուցեց Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի կարևորությունը և նրա հանդեպ դոնորների վստահությունն ու հավատը:

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Համագործակցություն Artfors-ի հետ

2022թ. դեկտեմբերին ԶԱՀ-ը համագործակցեց **ArtforArmenia նախաձեռնության եվ Վահե Մելիքսեթյան հիմնադրամի հետ**՝ առցանց բարեգործական աճուրդի շրջանակներում: Մեկ շաբաթվա ընթացքում Հայաստանի և Սփյուռքի մեր հայրենակիցները ուշադրությամբ հետևում էին առցանց հարթակին, որպեսզի բաց չթողնեն իրենց սիրելի արվեստի գործը՝ ի բարօրություն մեր զինծառայողների և նրանց ընտանիքների: Արդյունքում վաճառվեց 30 նկար՝ 3,111,662 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որից 1,625,199 ՀՀ դրամը փոխանցվել է ԶԱՀ-ին, 1,486,463 ՀՀ դրամը՝ Վահե Մելիքսեթյան հիմնադրամին: ԶԱՀ-ը երախտապարտ է Artfors-ի երիտասարդ և հայրենասեր թիմին իրենց բարեգործական նախաձեռնության համար, ինչպես նաև Վահե Մելիքսեթյան հիմնադրամին՝ իրենց նկարների վաճառքից ստացված գումարի 20%-ը նվիրաբերելու համար, և իհարկե այն նկարիչներին, ովքեր նվիրաբերեցին իրենց ստեղծագործությունները և մասնակցեցին այս կարևոր և հայրենանվեր նախաձեռնությանը:

Ֆրանս-հայկական մասնագիտական ուսուցման կենտրոն հիմնադրամի եվ ԶԱՀ-ի միջեվ համագործակցության հուշագրի շրջանակներում 2022թ. դեկտեմբերին ԶԱՀ-ի 12 շահառուներ մասնակցեցին մասնագիտական կարճաժամկետ դասընթացների հետևյալ ոլորտներում՝ խոհարարություն, վարսահարդարում, լուսանկարչություն և ռուսաց լեզու:

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Համագործակցություն Դալմա Գարդեն Մոլի հետ

2022թ. հոկտեմբերից համագործակցելով Դալմա Գարդեն Մոլի հետ՝ վերջինիս 10-ամյակի կապակցությամբ հոբելյանական իրադարձության շրջանակներում Դալմա Գարդեն Մոլը նախաձեռնել էր իր գովազդային վահանակների ամսական եկամուտից ստացված մի մասը նվիրաբերել ԶԱՀ-ին: Առաջին նվիրատվությունը կատարվեց 2022թ. դեկտեմբերին՝ 420,984 ՀՀ դրամի չափով:

Գաղտնի Ձմեռ պապը Galaxy ընկերությունների խմբի հետ

ԶԱՀ-ը՝ իր հավատարիմ դոնոր եվ գործընկեր Galaxy Group of Companies-ի հետ կազմակերպել էր Գաղտնի Ձմեռ պապ ծրագիր ԶԱՀ-ի շահառուների երեխաների համար՝ Ամանորի տոնն ավելի գունեղ դարձնելու համար: Պատերազմի հետևանքով հայրերին կորցրած արցախցի 3-11 տարեկան 369 երեխաներ Գաղտնի Ձմեռ պապի նվերներով լի տոպրակներ պետք է ստանային: Ծրագիրը համակարգվում էր ԶԱՀ-ի գործընկեր **Արցախի սոցիալական զարգացման ծրագրեր հիմնադրամի** հետ, որը ստանձնել էր նվերներով տոպրակները հասցեատերերին հասցնելու պատասխանատվությունը:

Սակայն 2022թ. դեկտեմբերի 12-ին սկսված Արցախի շրջափակման պատճառով նվերների առաքումը դադարեցվեց մինչև ճանապարհների բացումը:

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Հովել երաժշտական համերգ

Համագործակցելով **Hovel Music Production-ի** Սբ նախագծի հետ՝ ԶԱՀ-ի շահառուները հրավիրվեցին մասնակցելու տոնական միջոցառմանը, որտեղ աղոթք հնչեցվեց իրենց կյանքը զոհաբերած հերոսների հոգիների խաղաղության և անմահության համար: Երաժշտությունը գրվել է Սուրբ Ներսես Ողորմածի «Հավատով խոստովանում եմ» 24 աղոթքների համար:

Միջոցառմանը մասնակցում էին ԶԱՀ-ի շահառուներ զոհված զինվորների կանայք և մայրերը Երևանից: Սբ-ը իր համերգային ծրագրով շրջագայելու է նաև Հայաստանի մարզերում, որի շրջանակներում նույնպես կհամագործակցի ԶԱՀ-ի հետ:

Այրուձի ձիավարության ակումբի ամանորյա միջոցառումը

Ամբողջ աշխարհում աճում է հետաքրքրությունը կենդանիների խնամքի և բուժման նկատմամբ: Ձիերով թերապիան կամ հիպոթերապիան ամենատարածվածներից մեկն է ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում: Այս տեսակի թերապիան իրականացվում է **Այրուձի ձիավարության ակումբի** մասնագետների կողմից:

ԶԱՀ-ը արդեն երկրորդ տարին է, ինչ համագործակցում է **Այրուձի ձիավարության ակումբի և Հայորդի** նախաձեռնության հետ: Այդ համագործակցության շրջանակներում ԶԱՀ-ի շահառուների մոտ 50 երեխաներ հրավիրվեցին ձիարշավի՝ կենդանիների հետ շփվելու, իրենց օրը դրական հույզերով լցնելու, ընկերներ ձեռք բերելու համար:

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Ձիավարության թերապիան օգնում է երեխաներին բարձրացնել իրենց ինքնագնահատականը, բարելավել հաղորդակցման հմտությունները, զարգացնել կարեկցանքի, ինքնատիրապետման, վստահություն և պատասխանատվության հատկությունները: Ակումբի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել նման միջոցառումներ կազմակերպել ԶԱՀ-ի շահառուների երեխաների համար, քանի որ



Ջերմուկ Գրուպի տոնական ներկայացումը Երեվանի Երգի պետական թատրոնում

2022թ. դեկտեմբերի 30-ին **Ջերմուկ Գրուպի** հովանավորությամբ սահմանամերձ գյուղերի ԶԱՀ շահառուների 100 երեխաներ հնարավորություն ունեցան դիտելու **Երեվանի Երգի պետական թատրոնի** «Իմ Նոր տարին» երաժշտական ներկայացումը: Երեխաներին շատ դուր եկավ մյուզիքլը, և բոլորը ստացան փոքրիկ տոնական նվերներ: Սա հոգատարության դրսևորում էր տեղահանված երեխաների համար, ովքեր կորցրել են իրենց տները և ստիպված են հարմարվել նոր իրականությանը: Նախատեսվում է շարունակական համագործակցություն Ջերմուկ Գրուպի հետ:



ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Իդրամ Վճարային Համակարգի Գաղտնի Զմեռ պապ միջոցառումը

ԶԱՀ-ը **Իդրամ վճարային համակարգի եվ Հայորդի նախաձեռնության** հետ համատեղ կազմակերպել էր միջոցառում իր շահառուների երեխաների համար: Idram վճարային համակարգի՝ **Գաղտնի Սանտա** դարձած աշխատակիցները փոքրիկների համար անակնկալ նվերներ էին պատրաստել: Արցախի տարբեր շրջաններից տեղահանված շուրջ 100 երեխաներ, ինչպես նաև Հայաստանի սահմանամերձ գյուղերի զոհված զինծառայողների երեխաներ Ամանորի տոնական միջոցառմանը ջերմորեն հյուրընկալվեցին Մարիոթ Արմենիայում և Գաղտնի Սանտայից ստացան նվեր փաթեթներ:

Մենյու Գրուպ

Գյումրիի բազմազավակ զոհված զինծառայողների մոտ 30 երեխաների Ամանորը տոն դարձավ **Մենյու Գրուպի** շնորհիվ: Անհատական նվերներ՝ լի գրենական պիտույքներով և քաղցրավենիքներով: Օրը կրկնակի տոն դարձրեցին խաղավարները իրենց երգ ու պարով, յուրօրինակ խաղերով, ինչպես նաև մուլտհերոսներով ու քաղցր հյուրասիրությամբ:

ՁԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Համագործակցություն ID+-ի հետ

ID+-ն առաջին անգամ միացավ ՁԱՀ-ի հավատարիմ դոնորների խմբին՝ սոցիալական աջակցության ծրագրերում համագործակցելու համար:
ID+-ն 100,000 ՀՀ դրամ միանվագ նախատոնական ֆինանսական աջակցություն ցուցաբերեց ՁԱՀ-ի շահառուներին, մասնավորապես՝ 30 տեղահանված ընտանիքներին և վիրավոր զինծառայողներին, ինչպես նաև 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողներին: Գումարը կփոխանցվի շահառուների էլեկտրոնային դրամապանակներին՝ նշված խանութներից գնումներ կատարելու համար:

Ցանկանում ենք մեր **խորին շնորհակալությունը հայտնել** Հայաստանի և ամբողջ աշխարհի բոլոր անհատներին և կազմակերպություններին/համայնքներին, ովքեր կատարել են իրենց **պարտադիր դրոշմանիշային վճարումները եվ անհատական նվիրատվությունները**:

Ձեր աջակցության շնորհիվ ՁԱՀ-ը կարողանում է իրականացնել իր առաքելությունը՝ հոգալ այն զինծառայողների և նրանց ընտանիքների կարիքները, ովքեր իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերել են հանուն Հայաստանի և նրա սահմանների անվտանգության:

միասին՝ զինվորիս կողքին...

ԶԱՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ ԴԵՊԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

2017թ. հիմնադրման ժամանակ ԶԱՀ-ը կառավարվում էր Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից կամավոր հիմունքներով: ԶԱՀ-ը չուներ հատուկ թիմ կամ գրասենյակային տարածք: 2020թ. Արցախյան պատերազմը ցույց տվեց, որ ԶԱՀ-ը պետք է դառնա անկախ կազմակերպություն: Համապատասխանաբար, ձևավորվեց նվիրված թիմ և ընտրվեց արհեստավարժ հոգաբարձուների խորհուրդ՝ հիմնադրամի գործունեության կառավարումն ու վերահսկողությունը ապահովելու համար: Նաև վարձակալվեց և վերանորոգվեց գրասենյակային տարածք, կառուցվեցին բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Տարեսկզբից մինչ այսօր, 2022թ. կատարված աշխատանքները ստորև.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ, ԹԻՄԸ

- ԶԱՀ Ռազմավարությունը վերանայվել է
- 16 աշխատող
- Խորհրդի 5 անդամներ վերաընտրվել են

ՏՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԸ

- Հատուցում
- Դրոշմանիշային վճարումների վերադարձ
- ՏՏ անվտանգություն
- Նոր կայքի պլանավորում

ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ

- Վարձակալում, նորոգում
- Տեխնիկական վերազինում

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒՄԸ

- Մարդկային ռեսուրսներ
- Հաշվապահություն
- Թեժ գիծ
- ՏՏ անվտանգություն

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Շահառուների դիմումների հաստատման գործընթացի պարզեցում
- Շահառուների բազայի ընդլայնում
- Կազմակերպության ներքին ձեռնարկի մշակում

Զինծառայողների
Ապահովագրության
Հիմնադրամ

ՄԻԱՑԵՔ ՄԵԶ

ՃԱՆԱՉԵՔ ՄԵԶ

Իմացեք ավելին Զինծառայողների Ապահովագրության հիմնադրամի մասին: Այցելեք մեր կայքը, հետևեք մեզ սոցիալական հարթակներում:

ՊԱՏՄԵՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Պատմեք մեր առաքելության և կատարած աշխատանքի մասին:

ԱՋԱԿՑԵՔ ՄԵԶ

Կատարեք ձեր նվիրաբերությունը և աջակցեք զինվորներին ու նրանց ընտանիքներին, ովքեր զոհաբերել են ամենակարևորը՝ իրենց կյանքն ու առողջությունը հանուն Հայրենիքի:

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ